ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Ա. ԱԲՈՎՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբովյան.

Ի պատասխան Ձեր 21.12.2018թ. 01/26Մ գրության՝ Ծովակալ Իսակովի պողոտայի հ.50/3 հասցեին հարակից տարածքում Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկ Սամվել Հակոբյանի ծնողների կողմից օգտագործվող տարածքը հետ վերադարձնելու վերաբերյալ տեղեկացվում է.

Ծովակալ Իսակովի պողոտայի հ.50/3 հասցեին հարակից տարածքում տեղադրված տնակը տեղադրվել է տարիներ առաջ, չունի որևէ իրավական կարգավիճակ և փաստացի տնօրինվում է Լաուրա Անտոնյանի, Գևորգ Թաթիկյանի և Ֆենյա Պետրոսյանի կողմից: Վերոհիշյալ հասցեում գտնվող հողամասը, ըստ վարչության արխիվային նյութերի, ներառված է Երևանի քաղաքապետի 12.05.2004թ. հ.825-Ա որոշմամբ (06.07.2004թ. հ.2123-2004 գլխավոր հատակագիծ) ՀՀ պաշտպանության նախարարությանը տրամադրված հողամասի սահմաններում, հողամասի նկատմամբ իրավունքներն ստացել են պետական գրանցում և այն կրկնակի տրամադրման ենթակա չէ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ